## ՀԱՅԵՐԸ ԵՒ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ*

«Տաճկաստանի դէմ սկսուող պատերազմում մեծ դեր պէտք է խաղան հայերը։

Դա լինելու է թերևս ամենածանր փորձութիւնը, որ ճակատագիրն ուղարկում է բազմաչարչար փոքրիկ ժողովրդին, որ համարեա երեք հազարամեակ պահել է կուլտուրայի ջահը Առաջաւոր Ասիայում։ Բայց դա վերջին փորձանքը կըլինի։

Ռուսաստանի պատերազմը Տաճկաստանի դէմ,—հայերի համար—ազատութեան արշալոյս է, նոր, ազատ կեանքի նախադուռը, դա խաղաղ գոյութեան հեռանկարն է, առանց քրդական թալանների, առանց տաճիկ զինուորների բռնութիւնների, առանց տաճիկ աստիճանաւորների շորթութիւնների։ Ռուսաստանի պատերազմը Տաճկաստանի դէմ հայերի համար – սուրբ պատերազմ է։ Երբ որ 1877 թ. Հայաստանի դաշտերում, Արարատի ստորոտին, կռիւներ էին տեղի ունենում ռուսների և տաճիկների միջև, երբ որ Լոռիս-Մելիքովը ջարդում էր Մուխթարին, հայերի սրտերը նոյնպէս էին մղւում դէպի ռուս զօրքերը, հայ կանայք էլ էին մեղմ աղօթքներ առաքում ռուսների համար։ Սակայն այն ժամանակն ուրիշ էր։

Հայերը հնարաւորութիւն չունէին ներգործօն աջակցութիւն ցոյց տալու ռուսներին։

Տաճկաստանը դեռևս զօրեղ էր, իսկ հայերը—ճնշուած։ Վերջին ռուս-տաճկական պատերազմից յետոյ անցած գրեթէ քառասուն տարուայ ընթացքում շատ բան է փոխուել։

Հայերը քաղաքականապէս հասունացած և փորձառութիւն ձեռք բերին լեռնային պատերազմում։ 1908 թուի յեղափոխութիւնը իրաւունքներ խոստացաւ նրանց, և Երիտասարդ Թիւրքերի կառավարութեան առաջին փուլը հիմք

*) Русск. Вѣд. 243 համար։

էր տալիս հայերին լաւ օրեր սպասելու։ Բայց Ադանայի ջարդը, երէկուայ բարեկամների՝ Երիտասարդ Թիւրքերի բացարձակ մասնակցութեամբ, քաղաքական դրութիւնը դարձրեց դէպի Համիդեան ժամանակները։ Այնուհետև հայ կուսակցութիւնների պարագլուխները — թէ ազատամիտների և թէ Դաշնակցականների—մասնակցում էին տաճկական պարլամէնտին, բայց դա միակ տարբերութիւնն էր։ Հայերը կորցրին իրանց յոյսը Երիտասարդ Թիւրքերից և կրկին դիմեցին Եւրոպայի օգնութեան։ Եւրոպան անցեալ տարի նրանց 2 գեներալ-ինսպեկտոր և բարեփոխութիւններ տուեց, և Ռուսաստանը այդ գործում պետութիւնների առաջից էր գնում։ Գեներալ-ինսպեկտորները նոր էին գալիս Պոլիս, բայց տաճիկները, օգտուելով բռնկուած պատերազմից, նրանց իրենց տներն ուղարկեցին։ Այս ամենը համոզմունք ստեղծեց հայերի մէջ, որ առանց զէնքի օգնութեան նրանք չեն հասնելու լաւ ապագայի։ Հայերի այս դիրքը անսպասելի բան չի լինելու տաճիկների և նրանց գերմանական խնամակալների համար։ Այն վայրկեանից, երբ գերմանացիք կաշառքով և փաղաքշանքով իրանց կողմը դրաւեցին Էնվէր փաշային և սկսեցին առաջ տանել Ռուսաստանի հետ կապերը խզելու գործը, շարունակ չեն դադարել Երիտասարդ Թիւրքերի բանակցութիւնները Դաշնակցականների հետ, տաճկահայերի մէջ միակ ներգործօն կուսակցութեան։

Բանակցութիւնները վարւում է արևելեան զանդաղկոտութեամբ և ոչ ոքի չէին խաբում։ Մօտ մի շաբաթ առաջ հեռագիրը մի քանի լուր բերեց, որոնցից պարզ էր, թէ տաճիկները որոշել են պատերազմել և որ նրանք դադարել են հայերին հաշուի առնելուց։

Այդ լուրերը հաղորդում են, որ հայերի մէջ դաւադրութիւն է բացուած Էնվէրի դէմ, որ Պոլսում և Հայաստանում ձերբակալուած են «Դաշնակցութիւն» կուսակցութեան ակնառոր գործիչները։ Բայց տաճիկները,—կամ գուցէ նրանց տեղը գերմանացիք,—ըմբռնում են Հայաստանում մղուելիք պատերազմի վտանգը։ Հայերի շնորհիւ

ռուսները թշնամու երկրում կըզգան իրանց ինչպէս հայրենիքում։ Ընդհակառակը,— տաճիկները, սեփական հողի վրայ կռուելով, կըլինեն որպէս թշնամու բանակում։ Այդ ահագին զոհեր կըպահանջէ Հայաստանից, այնպիսի զոհեր, որոնց նմանը նա երբէք չի մատուցել, որովհետև տաճիկները, այն էլ գերմանացիների առաջնորդութեամբ, այս անգամ անողոք կըլինեն և լոյս աշխարհ կըհանեն Աբդիւլ Համիդի բոլոր ամենագաժան կործանարար դեղատոմսերը։ Եւ Հայաստանը գուցէ աւելի դառը վիճակ տպրի, քան Լեհաստանը, քան Բելգիան։

Բայց հայերը պատրաստ են բոլոր զոհաբերութիւններին։ Նրանց սպասող ապագան— քաղաքական ազատ գոյութիւնը Ռուսաստանի հզօր հովանաւորութեան ներքոյ— արժէ ամեն զոհողութիւններ։

Այժմ տաճկական և ռուսական հայերին, որ կանգած են ողբերգական ճամբաբաժնի առջև և պատրաստ են ռուսական զօրքի հետ բաժանել նրա արիւնոտ աշխատանքը— հայերին միայն մի բան է պէտք,— որ նրանց ուղեկցի, ռուս ժողովրդի եղբայրական աջակցութիւնը, որպէսզի նրանք իմանան, որ Ռուսաստանի իւրայինների և օտարների համար արիւն քամող սրտում Հայաստանի համար էլ կայ համակրութիւն, որպէսզի Ռուսաստանում չմոռանան փոքրիկ երկիրը, որ ամենից վատթար դրութեան մէջ է, որովհետև նա իր ամենախիստ թշնամիների ձեռքումն է։ Եւ միայն մի ուրախութիւն է լցնում հայկական սրտերը այս ծանր օրերին՝ որ պատերազմը եղբայրական ամուր շղթաներ է կռելու Ռուսաստանի և Հայաստանի միջև։

Ա. Ճիվելեգեան.